

463



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 16 » 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 002 - 25

Նախաձեռնող՝

«ԼՈՒՔ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան փ. 23շ. 26 բն.

Գործունեությունը՝

Վարդենիս համայնքի Շափվան բնակավայրում
կրթահամալիրի կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 002 - 25

« 16 » հունվարի 2025թ.

**Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում
կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն/այսուհետ՝ ՇՄԱԳ/
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք,
Շատվան բնակավայր

Ներածական մաս «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ Գեղարքունիքի մարզի Շատվան բնակավայրում նախատեսվում է իրականացնել կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.2 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Շատվան բնակավայրի կրթահամալիրը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի հողամասի սահմաններում: Կրթահամալիրի կառուցումից հետո հին դպրոցը կապամոնտաժվի: Նախատեսվող գործունեության տարածքը հարթ ռելիեֆով ազդեցության ենթարկված, ամբողջ պարագծով ցանկապատված տարածք է, որոշ հատվածներում հանդիպում են բաց տարածքներ, որտեղ բուսահողի հզորությունը չի գերազանցում 10 սմ, Կարմիր գրքում գրանցված բույսերն և կենդանիները, բնական հուշարձաններ բացակայում են: Տարածքի ամենամոտ պատմամշակութային հուշարձանը 19.400 մ հեռավորության վրա գտնվող 15-17-րդ դարերի գերեզմանոց հուշարձան է: Նախատեսվող գործունեության հողամասի սահմանները չեն հատվում հուշարձանի տեղադիրքի սահմանների հետ: Հուշարձանի վնասման ռիսկերը կանխելու նպատակով



նախատեսվում է համապատասխան իրավասություն ունեցող կազմակերպության կողմից իրականացնել հուշարձանի ուսումնասիրություն և պահպանության համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերի հորիզոնները տատանվում են 3.0-5.3 մմ սահմաններում: Նախատեսվող գործունեությունը ստորերկրյա ջրերի հորիզոնների հետ չի հատվում:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.2 հա,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 1999 քմ,
- կառուցապատված մակերեսը՝ 1700 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 10.694 քմ,
- անջրանցիկ մակերեսը՝ 2905 քմ:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երկհարկանի՝ 144 աշակերտի համար նախատեսված դպրոց և երկհարկանի 4 խմբի համար նախատեսված մանկապարտեզ: Դպրոցը նախատեսված է 1-ինից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով: Նախագծով նախատեսված են դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց, 144 նստատեղով նախատեսված դահլիճ: Դասասենյակները կահավորված են լինելու անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Դպրոցն ապահովված է լինելու բժշկի կաբինետով՝ կահավորված անհրաժեշտ բժշկական կահույքով: Դպրոցի նկուղն ունենալու է 21.6x20.4 մ չափեր, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան: Նկուղային հարկն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց: Թաքստոցն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգույցով, վացարանով: Ստորգետնյա հատվածում թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք:

Մանկապարտեզի խմբերը համայրված են լինելու հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակ:

Կրթահամալիրի ջեռուցման համար նախատեսված է ավտոմատացված ջրային երկու էլեկտրակաթսա՝ յուրաքանչյուրը 120կՎտ հզորությամբ:

Կրթահամալիրի էներգաարդյունավետության նպատակով նախագծով նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ: Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ բացօթյա միջոցառումների համար: Նախատեսվում է բացօթյա մարզադաշտ, վազբուլի:

Կրթահամալիրի բակում նախատեսվում է տեղադրել 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 318 հատ 550 Վտ պիկային



հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Հաշվի առնելով, որ դպրոցը գործող է, տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման գծերը, հետևաբար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 23 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (45 մարդ), ինչը կազմում է 636.2 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2362.8 մ³: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2999մ³/շին.ժամ:

Շինարարության ընթացքում խմելու անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել համայնքային ջրամատակարարման ցանցից, իսկ ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքների ընթացքում կատարվելու է մոտ 7530 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից հետլիցքը կազմում է 4400 մ³:

Գործունեության ընթացքում ապամոնտաժման արդյունքում գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 2500 տ, երկրորդայի օգտագործման համար պիտանի չեն: Վերջիններիս, ինչպես նաև ավելացած 3130 մ³ հողային հանույթի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վարդենիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ընթացքում կանխատեսվում է մոտ 3 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստմասե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների լվացման ջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի



տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է շինտեխնիկայի անիվների լվացումից առաջացած հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով՝ համաձայն Վարդենիսի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի:

Կանաչապատ տարածքները ոռոգելու նպատակով նախագծով նախատեսված է ոռոգման ռեզերվուարի տեղադրում, որը պարբերաբար կլիցքավորվի համայնքային ջրատարներից՝ ըստ սահմանված պահանջների և տեխնիկական պայմանների:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,

- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովվում,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովելու նպատակով:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Գեղարքունիքի մարզի Շատվան բնակավայրի կրթահամալիր կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը, Վարդենիսի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:



Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Գեղարքունիքի մարզի Շատվան բնակավայրում իրականացվել են հանրային լուսմներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Խստորեն հետևել գործունեության տարածքից 19.400 մ հեռավորության վրա գտնվող 15-17-րդ դարերի գերեզմանոց հուշարձանի վնասման ռիսկերը կանխելու, հուշարձանի պահպանական գոտիները չխախտելու վերբերյալ ձեռնարկված միջոցառումների իրականացմանը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան